https://doi.org/ 10.56246/9789939117652-125

ՆՄԱՆԱԿ-ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԻ ԱՐՔԵՏԻՊԻ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ»-ՈՒՄ

ՆԱԻՐԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Ամփոփում: *Արքետիպերը հոգեկանի և նրա բաղկացուցիչների նախակերպարներն են, որոնք վերազգային են և հատուկ են մարդու գիտակցությանն առհասարակ: Դրանք առավել մաքուր տեսքով հանդես են գալիս դիցաբանության մեջ, այդ իսկ պատճառով միասնական են մշակույթի նախնական աստիճանի համար[1]: Միաժամանակ պետք է նշել, որ յուրաքանչյուր ազգային մշակույթում նրանք յուրօրինակ ինքնատիպություն են ձեռք բերում ազգային առասպելները և աշխարհի գեղարվեստական պատկերը ստեղծելիս: Հոդվածում մենք արքետիպը փորձելու ենք քննել միասեռ երկվորյակության, այն է՝ մեկ մորից ծնված արյունակից եղբայրների՝ Սանասարի և Բաղդասարի առասպելական կերպարներում և անտագոնիստ երկվորյակների՝ այս դեպքում մեկ հորից ծնված, բայց հակընդդեմ հերոսների՝ Դավիթի ու Մսրա Մելիքի կերպարների համատեքստում: Հետազոտողներից շատերը փորձում են գտնել երկվորյակների արքետիպի ծագման բացատրությունը՝ հիմնված ոչ թե վաղնջական աստվածաբանական գաղափարների, այլ երկվորյակների ու նրանց իրական ծննդյան փաստի վերաբերյալ հասարակության մեջ գոյություն ունեցող պատկերացումների հիման վրա: Նրանցից ոմանք գտնում են, որ կնոջ կողմից երկվորյակների ծնունդը հնում ընկալվում էր որպես պտղաբերության վկայություն և պարզապես կապվում էր պտղաբերության պաշտամունքի հետ:*

[1] Տե՛ս **Зулумян Б.,** Архетип в структуре художественного сознания. Памятник армянской эпической поэзии “Песнь о Ваагне”, Պատմաբանասիրական հանդես, № 2, 2007, էջ 38:

Հիմնաբառեր՝ *էպոս, արքետիպ, դիցաբանություն, զուգահեռներ, մշակութային հերոս, միասեռ երկվորյակներ, անտագոնիստ երկվորյակներ*

Մուտք

Արքետիպերը հոգեկանի և նրա բաղկացուցիչների նախակերպարներն են, որոնք վերազգային են և հատուկ են մարդու գիտակցությանն առհասարակ: Դրանք առավել մաքուր տեսքով հանդես են գալիս դիցաբանության մեջ, այդ պատճառով միասնական են մշակույթի նախնական աստիճանի համար[1]: Միաժամանակ պետք է նշել, որ յուրաքանչյուր ազգային մշակույթում նրանք ինքնատիպություն են ձեռք բերում ազգային առասպելները և աշխարհի գեղարվեստական պատկերը ստեղծելիս: Գիտական շրջանառության մեջ մտնելուց ի վեր «արքետիպ» տերմինի համընդհանուր ընդունելի սահմանումը մինչ օրս չի ստեղծվել: Արքետիպերը ժամանակակից ուսումնասիրությունների մեջ առավել հաճախ ենթադրվում և ընկալվում են որպես երևույթի պատկերավոր մոդելներ: Միրչա Էլիադեն, օրինակ, արքետիպ տերմինը Յունգից տարբեր է բնութագրում. «Յունգի համար, ինչպես գիտեք, արքետիպերը կոլեկտիվ անգիտակցականի կառույցներ են: Ես օգտագործում եմ «արքետիպ» տերմինը որպես «նման մոդելների» և «պարադիգմաների» հոմանիշ...»[2]: Ուրիշները «թափառող սյուժեների» և նման կերպարների գոյության պատճառները համարում են պատկերվող աշխարհի օբյեկտիվությունը, մարդու ճանաչողական կարողությունների ձևավորման առանձնահատկությունները, և որ աշխարհի նկարագրությունը պարունակում է շրջապատի մասին մար-

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 38:

[2] **Элиаде М.,** Космос и история. Избранные работы. М., 1987, с. 30.

դու նախնական զգացողությունները, որոնցից էլ ձևավորվում են գիտության, փիլիսոփայության, կրոնի համակարգված կառույցները[1]:

«Երկվորյակություն» եզրույթը օգտագործվում է և՛ հոգեբանության, և՛ փիլիսոփայության, և՛ մշակութաբանության, և՛, իհարկե, գրական քննադատության մեջ: Համապատասխանաբար այս հասկացության սահմանումները կարող են տարբեր լինել, ավելին, «երկվորյակ» բառի իմաստային ծանրաբեռնվածությունը ևս բազմազան է: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանն ասում է, որ «Երկվորյակը մի մորից միաժամանակ ծնված երկու զավակներից յուրաքանչյուրն է, 2-րդ նշանակությամբ՝ նմանվող, նման մեկը, 3-րդ նշանակությամբ՝ գործակից, միանման գործ կատարող»[2]: Էդ.Աղայանի հեղինակած բառարանը սրան նաև հավելում է՝ «... ներքին կամ արտաքին հատկանիշներով մեկին միանգամայն նման անձ, երկնմանակ»[3]: Հայոց լեզվի նոր բառգիրքն էլ ավելի ընդհանրական սահմանում է տալիս, այն է՝ կրկնակ՝ «Երկուորեականութիւն-կրկին բնութիւն»[4]: Հատկանշական է, որ նույնարմատ «երկվություն» բառը ընդհանրապես հակադիր իմաստ է պարունակում՝ «Երևույթի մեջ գոյություն ունեցող ոչ նման, իրար հակասող երկու տարբեր որակ, հակասականություն»[5]: Ս. Հարությունյանը կարծում է, որ առասպելաբանության մեջ տարածված երկվորյակության արքետիպի հիմքում ընկած է «երկվության և, մանավանդ, երկհակադրության գաղափարը, որը խորհրդանշում է բնության ու

---

[1] Տե՛ս **Постовалова В. И.,** Картина мира в жизнедеятельности человека: Роль человеческого фактора в языке. Язык и картина мира, М., 1988, էջ 8–69:

[2] Տե՛ս ԺՀԼԲ, Եր., 1969, էջ 295-596:

[3] **Աղայան Էդ.,** Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

[4] Տե՛ս **Գաբամաճեան Ս.,** Նոր բառգիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910:

[5] ԺՀԼԲ, էջ 295-596:

հասարակության մեջ իրականում գոյություն ունեցող կամ այդպիսին ընկալվող երկու տարբեր, հաճախ հակադիր առարկաներ, երևույթներ կամ սկզբունքներ, որոնք սովորաբար անձնավորվում են մարդկային կամ կենդանիների զույգ կերպարներում՝ իբրև արյունակից երկվորյակներ»[1]: Այդպիսիք են՝ տիեզերքը և քաոսը, լույսը և խավարը, բարին ու չարը և այլն:

Հոդվածում մենք արքետիպը փորձելու ենք քննել միասեռ երկվորյակության, այն է՝ մեկ մորից ծնված արյունակից եղբայրների՝ Սանասարի և Բաղդասարի առասպելական կերպարներում և անտագոնիստ երկվորյակների՝ այս դեպքում մեկ հորից ծնված, բայց հակընդդեմ հերոսների՝ Դավթի ու Մսրա Մելիքի կերպարների համատեքստում:

Երկվորյակների մարդակերպ պատկերացումը Հայկական լեռնաշխարհում հին ու խոր արմատներ ունի: Երկվորյակների հավատալիքն ու պաշտամունքը ի հայտ են գալիս դեռևս մ.թ.ա. II-I հազարամյակների ժայռապատկերներում: Նրանք հնուց անտի իրենց պատկերացումներով ու առասպելներով կապված են եղել երկնքի հետ, մարմնավորել որոշակի աստղախումբ, եղել են մարդակերպ, համասեռ, այսինքն՝ եղբայրներ, պատկերացվել են անընդհատ շարժման ու գործողության մեջ, ինչպես հետիոտն, այնպես էլ ձիավոր[2]: «Վիպասանքում» և «Սասնա ծռեր» էպոսում երկվորյակները բացահայտ առասպելաբանական ծագում ունեն, իսկ մյուս երկու ավանդական վեպերում՝ «Պարսից պատերազմում» և «Տարոնի պատերազմում» Երկվորյակների առասպելները դրսևորվում են պատմական զրույցների մակարդակով[3]:

---

[1] Տե՛ս **Հարությունյան Ս.,** Հայ առասպելաբանություն, Եր., 2017, էջ 337:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 338:

[3] Տե՛ս **Ղռեջյան Լ.,** Երկվորյակների առասպելի ելակետային արժեքը հայ վիպական հուշարձանների հորինվածքում, Պատմա-բանասիրական հանդես, 2010, № 2, 178-192:

Երկվորյակությունը կամ երկնմանակությունը Մելետինսկու կողմից բնութագրվում է որպես «գրական-առասպելական սյուժետային արքետիպ», որը ձգվում–հասնում է մշակութային հերոսի արխաիկ առասպելին: Երկնմանակության ամենահին ձևը հանդես է գալիս մեկ անձի մեջ մշակութային հերոսի և տրիքստերի համակեցությամբ[1]: Ինչ-որ փուլում (ըստ Մ. Մելետինսկու՝ դա տոհմացեղային կարգերի քայքայման ժամանակաշրջանն է) այս մշակութային հերոսի կերպարը բաժանվում է երկու մասի, և հայտնվում են երկվորյակները՝ մեկը տիեզերքում կարգուկանոնի համար պատասխանատու լուրջ կերպար, իսկ մյուսը՝ խաբեբա: Երկվորյակներից յուրաքանչյուրին հատկացված է իր տարածքը: Էլիադեն ևս գտնում է, որ երկվորյակները, որոնք հաճախ հանդես են գալիս որպես դեմիուրգներ՝ աշխարհի արարիչներ, որ ստեղծել են օր ու գիշեր, լուսին ու արև, ցամաք և ջուր ու ընդհանրապես երկրի վրա ամեն ինչ, մշակութային զույգ հերոսներ են, որ արտահայտում են ունիվերսալ երկճյուղավորում (դիխոտոմիա)[2]:

Մելետինսկու խմբագրած «Դիցաբանական բառարանում»[3] երկվորյակների առասպելը հասկացվում է որպես լեգենդների շարք, որտեղ երկվորյակները առավել հաճախ հանդես են գալիս եղբայրների տեսքով, կատարում են առաջին նախնիների և մշակութային հերոսի գործառույթները: Քանի որ երկվորյակները առաջնային քաոսից քաղաքակրթություն ստեղծողներն էին, նրանց բնորոշ էր անփորձությունը, հանպատրաստից ստեղծարարությունը: Նրանց գործունեության մեջ կարևոր է արարման շարժառիթը, նոր ձևերի ստեղծումը, գործերի «սկզբի» և անավարտ լինելու թեման: Ինչպես նշում է Լևոն Աբրահամյանը. «... միայն նույնական երկվորյակները նորմալ օնտոգենեզային զարգացման պա-

---

[1] Տե՛ս **Мелетинский Е.М.,** О литературных архетипах, М., 1994, էջ 39:

[2] Տե՛ս **Элиаде М.,** նշվ. աշխ., էջ 208:

[3] Տե՛ս Мифологический словарь / Мелетинский, Е. М., 1991, էջ 736:

բագայում կարող են իրենց վրա վերցնել «Սկզբի առասպելի» իդեալական հերոսների դերը»[1]: Ավելի ուշ շրջանի առասպել-ներում երկվորյակների ամենատարածված գործառույթները կապված են նաև բժշկության, մարտերի ժամանակ օգնություն հասցնելու, քաղաքներ հիմնադրելու, նավաստիներին հովանավորելու, եղանակի, անձրևաբեր ամպերի վերահսկման, պտղաբերության և այլնի հետ:

Երկվորյակները, ինչպիսիք են Սանասարը և Բաղդասարը, հունահռոմեական Հռոմուլոսը և Ռեմոսը, Պրոմեթևսը և Էպիմեթևսը, կովկասյան Սիրդոնը և Սոսլանը, սկանդինավյան Օդինը և Լոկինը, հնդկական Ինդրան և Ագնին[2] և այլն, որպես կանոն, կապված են ազգակցական (ընդհանուր մայր ունեն) կամ խորթ եղբոր (ընդհանուր հայր ունեն) հարաբերություններով: Վերջինը կարելի է դիտել որպես իրենց նախկին միասնական բնույթի վկայություն, որ հաճախ ձգվում է դեպի դիցաբանական ծագմամբ սրբազան երկվորյակները, երբ երկվորյակներից մեկի ծնունդը աստվածային էր, մյուսինը՝ մարդեղեն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիցաբանությունն իրականության արտացոլման հնագույն ձևերից է, գիտնականներից ոմանք կարծիք են հայտնել, թե «ոչ թե բնությունը, այլ հասարակությունն է առասպելի իրական մոդելը: Նրա հիմնական մոտիվները մարդու հասարակական կյանքի պրոյեկցիաներ են»[3]: Առասպելաբանությունը վերածվում է սոցիալական կառույցների և սոցիալա-

---

[1] **Абрамян Л.,** «Мифы о начале» и проблема первого табу / Անտառ Ծննդոց. Հոդվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 55-63:

[2] Տե՛ս **Պետրոսյան Ա.,** Հայկական էպոսը և առասպելաբանությունը, ակունքներ. առասպել և պատմություն, http://vizantarm.am/page.php ?369:

[3] **Дюркгейм Э.,** Элементарные формы религиозной жизни, Мистика, Религия, Наука, Классики мирового религиоведения. Антология, М. 1988, с. 181: Տե՛ս նաև **Штернберг Л. Я.**, Первобытная религия, Л., 1936, с. 82.

կան հարաբերությունների արտացոլման հայելու: Առասպելը արտացոլում է մարդու իրական, բայց ճնշված զգացմունքները[1]: Հետազոտողներից շատերը փորձում են գտնել երկվորյակների արքետիպի ծագման բացատրությունը՝ հիմնված ոչ թե վաղնջական աստվածաբանական գաղափարների, այլ երկվորյակների ու նրանց իրական ծննդյան փաստի վերաբերյալ հասարակության մեջ գոյություն ունեցող պատկերացումների վրա: Նրանցից ոմանք կարծում են, որ կնոջ կողմից երկվորյակների ծնունդը հնում ընկալվում էր որպես պտղաբերության վկայություն և պարզապես կապվում էր պտղաբերության պաշտամունքի հետ[2]: Այսպես, բրիտանական Կոլումբիայի հնդկացիները հավատում են, որ երկվորյակները իշխանություն ունեն եղանակի ու ջրերի վրա, կարող են իրենց կամքով առատացնել ձկան որսը ու դրա պատճառով նրանց անվանում են «առատության աղբյուր»[3]:Այսինքն՝ երկվորյակները, որոնք ասոցացվում էին աստվածությունների հետ, օժտված լինելով ամպրոպային բարի աստծո հատկանիշներով, բերքի, բույսերի աճի և բերքատվության պահապաններն էին[4]: Մյուսներն էլ մատնանշում են օրինակներ, երբ երկվորյակությունը վախ էր առաջացնում, համարվում էր անբնական, անհեթեթ ու անընդունելի երևույթ[5]: Արխաիկ հասարակություններում, օրինակ՝ աֆրիկյան որոշ ցեղերի ծեսերում, այս խնդիրը լուծվում էր երկվորյակներից մեկին մահվան դատապարտելով, և հատկանշական է, որ մահվան դատավճիռը պիտի իրականացվեր հոր ձեռքով:

---

[1] Տե՛ս **Леви-Строс К.,** Структурная антропология, М., 1985, с. 184:

[2] Տե՛ս **Штернберг Л. Я.,** Культ близнецов в Китае и индийские влияния, сб. музея антропологии и этнографии, Л., 1927, т. VI, с. 1-16.

[3] Տե՛ս **Фрейзер Дж. Дж.,** Золотая ветвь, М., 2017, էջ 52:

[4] Տե՛ս **Ղռեջյան Լ.,** նշվ. աշխ., էջ 188:

[5] Տե՛ս **Тэрнер В.,** Символ и ритуал, М., 1983, էջ 136-137:

Երկվորյակների առասպելները մոդելավորում են մարդկային կոլեկտիվի ծնունդը և հանրային կյանքի ծագումը նախասոցիալական կյանքից: Եղբայրներն իրենց նպատակներում միասնական են, գործում են կազմակերպված՝ հիմնադրում են քաղաքներ, օգնում են մարդկանց, բժշկում են, դարմանում են վերքերը, հովանավորում են: Այդպիսի առասպելական երկվորյակներ են «Սասնա ծռեր» էպոսում նույն մորից ծնված Սանասարն ու Բաղդասարը, բալթիական Յումիսը, որի հենց անունը նշանակում է զույգված հասկ[1], Հռոմուլոսը և Ռեմոսը, հին հնդկական Աշվինները, Ամֆիոնը և Զետոսը՝ Զևսից ծնված երկվորյակ զույգը, որոնք ներկայացված են որպես Թեբեի լեգենդար հիմնադիրներ (Եվրիպիդեսը իր «Փյունիկուհիներ» պիեսում նրանց անվանում է «Դիոսկուրներ՝ սպիտակ ձիերի վրա հեծյալներ»[2]:

Ա) Երկվորյակների ծնունդը

1. Ջուր

Երկվորյակ եղբայրների ջրային ծնունդը համաշխարհային առասպելաբանության մեջ խիստ տարածված մոտիվ է և ունի բազմաթիվ զուգահեռներ տարբեր ժողովուրդների դիցաբանական և էպիկական ստեղծագործություններում: Հին հույները՝ ի դեմս Թալեսի, ամեն ինչի սկիզբը համարում էին ջուրը ու ջրից էին մակաբերում կյանքը[3]: Գետը, ծովը կամ լիճը դիցաբանական ընկալումներում համարվում էին այս կամ այն աշխարհների սահման, որի միջոցով կատարվում էր արական ու իգական սկիզբների միացումը, արդյունքում ծնվում են սրբազան երկվորյակները (Սանասար և Բաղդա-

---

[1] Տե՛ս **Иванов В. В., Топоров В. Н.,** Юмис (Мифологический словарь, гл. ред. Е. М. Мелетинский), էջ 672:

[2] Տե՛ս **Еврипид,** Трагедии в 2 томах, т. 2, Финикиянки, Перевод И Анненского, М., 1999, с. 606:

[3] **Диоген Лаэртский,** О жизни, учениях и изречениях знаменитых философов, М., 1986, с. 17.

սար, Ինդրա և Ագնի՝ ջրերի որդիներ[1]): Դրա ամենահին օրինակներից մեկը «Ավեստայի» հիմքի վրա ձևավորված իրանական մի առասպել է, որտեղ պատմվում է Զրադաշտի՝ ծովում պահպանված սերմի ու անարատ կույսի զուգավորումից ծնվածի մասին[2]: Նարթական էպոսի գլխավոր հերոսուհու՝ Սաթանայի մայրը՝ Ձերասան, մտնում է ծովը և զուգավորվելով նարթերի հզոր դյուցազնի՝ Ախսարթագի հետ՝ ծնում Վըրրզմագ և Խամըց երկվորյակներին[3]: Հունական առասպելական Ալոադները ծնվում են այն պատճառով, որ նրանց մայրը սիրահարվում է Պոսեյդոնին, ամեն օր գնում է ծովի ափ ու ծովի ջուր լցնում իր կրծքին[4]: Կոտ դ'Իվուարում կինը, եթե ցանկանում է երկվորյակներ ծնել, պետք է ծիսական լվացում կատարի Կոմոե գետում՝ նախապես ջրի ոգուն նվերներ մատուցելով: Տարվա ընթացքում նա լույս աշխարհ կբերի երկվորյակների: Հետաքրքիր է, որ այս հավատալիքը աշխատում է և կանանցից շատերը երկվորյակներ են ծնում[5]: Ջրի հետ են կապված ոչ միայն մշակութային հերոս երկվորյակները, այլև նրանց հակոտնյա վիշապները, որոնց կարևոր գործառույթներից մեկը աղբյուրի ակը հսկելն է: Ջուրը նաև ուղեկցում է նրանց մինչև կյանքի վերջը և օգնում հերոսներին իրենց գործառույթներն իրականացնելիս: Այսպես, Սանասարը շատ է հզորանում՝ ծովի տակ ջրհորից ջուր խմելով, Դավիթը լցվում-հզորանում է, հենց որ խմում է անդրաշխարհից դուրս ցայտող հրաշալի կաթնաղբյուրից, իսկ հնդկական

---

[1] Տե՛ս **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Ա, էջ 78:

[2] Տե՛ս **Հարությունյան Ս.,** նշվ. աշխ., էջ 464:

[3] Տե՛ս **Դալալյան Տ.,** Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ, ՊԲՀ, 2002, էջ 195:

[4] Տե՛ս **Պետրոսյան Ա.,** Հայկական էպոսի հնագույն ակունքները, Եր., 1997, էջ 23, նաև՝ Псевдо-Аполлодор. Мифологическая библиотека / Перевод, В. Г. Боруховича. Л.1972. https://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1358680001:

[5] Տե՛ս **Саркисова-Куаме В.,** Культ Близнецов в Бауле, Африканский сборник /отв. Ред.В Выдрин/, СПб.,МАЭ РАН, 2009, էջ 6:

առասպելներում հաճախ ջրի փոխարեն մեղրը կամ կաթն է ուժ տալիս հերոսներին[1]:

2. Շունչ կամ հուր

Տարածված մոտիվ է նաև եղբայրների ծնունդը կրակից կամ հրեղեն շնչից: Բրիտանական Կոլումբիայի հնդկացի ցեղերից մեկում քամին համարում են երկվորյակների շունչ[2]: Հյուսիսամերիկյան հնդկացի իրոկեզների մի առասպելը պատմում է, որ Ավենհաի անունով մի կույս իրեն առաջարկում է երկնային աստծուն և հղիանում նրա շնչից[3]: Սանասարի և Բաղդասարի ծնունդի պատճառը որոշ պատումներում ևս համարվում է սրբազան շունչը. «Ախճիգ ասից.- Թա՛կավուր, գիգաս, էգո՛, Ընծի մը՛ մոդըգնա, ես էրգուհոքով ըմ: Ասից.- Իմա՞լ տու էրգուհոքով իս: Ասից.- Քու հանգ էգավ ըմ վրեն, էրգուհոքովցա»[4]: Գարեգին Հովսեփյանի 1892 թ. գրառած ու հրատարակած մի պատումում Ծովինարը Խալիֆին դարձյալ հավատացնում է. «Դյու շատ զորեղ իս. խոսացիր, քյու բերնի հելըմ յես առա, ըդուց տղով ելա»[5]:

3. Կենդանական ծագում

Երկվորյակների մասին առասպելաբանական պատկերացումների ամենավաղ, ամենահին շերտը կարելի է գտնել կենդանական առասպելներում, որոնք ենթադրում են կենդանիների մասնակցությունը նրանց ծննդյանը կամ կենդանիների և նրանց կապը: Երկվորյակների և տոտեմի միջև կապի գաղափարը բնորոշ է առաջին հերթին դիցաբանական մտածողության զարգացման ամենացածր փուլերին: Այս մակարդակը աչքի է ընկնում աշխարհի գրեթե բոլոր ազգերի մեջ, և նրանցից շատերը (օրինակ՝ աֆրիկական դոգոնները)

---

[1] Տե՛ս **Աբեղյան Մ.,** նշվ աշխ., էջ 407:
[2] Տե՛ս **Фрейзер Дж. Дж.,** նշվ աշխ., էջ 52:
[3] Տե՛ս **Элиаде М.,** նշվ աշխ., էջ 220:
[4] «Սասնա ծռեր», աշխ. Ս. Հարությունյանի, Եր., 1977, էջ 104:
[5] «Սասնա ծռեր», խմբ. Մ. Աբեղյանի, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, հ. Ա, Եր., 1936, էջ 129:

կարծում են, որ յուրաքանչյուր մարդ ունի իր երկվորյակը՝ կենդանու տեսքով: Փաստորեն, մարդն իրեն ազգակցական կապերի մեջ էր դնում բույսերի, կենդանիների, անգամ բնության առարկաների հետ, իր տոհմը կամ ցեղը ծագած համարում տվյալ բույսից կամ կենդանուց, որոնք դառնում են սրբազան նախնիներ[1]: Այսպես, աֆրիկյան Յորուբա ցեղի մեջ կապիկը համարվում է երկվորյակների եղբայրը[2], Դան ցեղի պաշտամունքային հարացույցում կարևոր տեղ ուներ սև օձը, Նուեր ցեղը երկվորյակներին համարում է մարդ-թռչուններ[3]: Հարավային Ամերիկայում Բակայրի ցեղի առասպելներից մեկում երկնքի աստված Կամուսիսը ստեղծում է մարդկանց, հետո մի կնոջ ամուսնացնում է միֆական Օկա հովազի հետ, կինը հղիանում է Քերի ու Քամե երկվորյակներով[4]: Իտալական մի զրույցում հայկական առասպելի նման մայրը ցլից ծնում է երկվորյակներ, սերբական էպոսի մի քանի երգերում Մարկոն ծնվում է օձից[5]:

Հնդեվրոպական առասպելներում ևս երկվորյակ եղբայրների կապը կենդանու հետ երբեմն աղոտ, երբեմն հստակ մատնանշվում է: Հայկական վիպասանքում հիշատակված առաջին երկվորյակները՝ Երվանդը և Երվազը, ծնվում են Արշակունի կնոջ ու սպիտակ ցլի խառնակությունից, Հռոմուլոսին ու Ռեմոսին կերակրում է գայլը, Հեկտորի եղբայր Պարիսին փոքր հասակում սնում է արջը[6]: Իսկ ամենահիշարժան գծերից մեկը, որ չի վրիպել բազմաթիվ հետազոտողների աչ-

---

[1] Տե՛ս **Հարությունյան Ս.,** Բանագիտական ակնարկներ, Եր., 2010, էջ 112:

[2] Տե՛ս **Иванов В. В.,** Близнечные мифы, Мифы народов мира, М., 1991, т. 1, էջ 175:

[3] Տե՛ս **Леви-Строс К.,** Первобытное мышление, М., 1999, էջ 91:

[4] Տե՛ս **Элиаде М.,** նշվ. աշխ., էջ 208:

[5] Տե՛ս **Աբեղյան Մ.,** նշվ. աշխ., էջ 140:

[6] Տե՛ս **Scott Littleton C.** Some possible Indo-European themes in the Iliad, Myth and Law among the Indo-Europeans, Berkley, 1970, էջ 229-246:

քից, հնդեվրոպական սրբազան երկվորյակների ու ձիու կապն է: Երկվորյակների ու ձիերի կապի մասին պատկերացումները ծագել են վաղնջական ժամանակներում և ուղիղ կապ ունեն տոտեմական հավատալիքների հետ: Այս կապը ակնառու է գրեթե բոլոր նշանակալի երկվորյակների առասպելներում, օրինակ, հնդկական աշվինների մասին (հնդկական ašva - ձի) Ռիգվեդայում հիշատակվում է, որ ձիերով (երբեմն՝ ցուլ կամ էշ) լծված կառքը նրանց մշտական ուղեկիցն է, հայկական էպիկական երկվորյակների՝ ձիուց սերած լինելու վերաբերյալ աղոտ հիշատակումներ կան էպոսում[1], հունահռոմեական դիոսկուրները հեծյալների՝ էկվիտների հովանավորներն են համարվում: Երկվորյակների կապը ձիերի հետ որպես հիշատակություն պահպանվել է ինչպես անգլոսաքսոնական ցեղերի առաջնորդներ ու նախնիներ հանդիսացող Հենգիստի և Հորսայի կերպարներում, որոնց անունները, ի դեպ, նշանակում են ձի, մտրուկ[2], այնպես էլ Մախայի կամ Մաշայի[3] մասին իռլանդական առասպելներից մեկում. նա ստիպված է լինում վազել Օլսթերի թագավորի ձիերի հետ իր հղիության վերջին օրերին և ծննդաբերում է երկվորյակ Ֆիրին և Ֆիալին և այլն:

Այս պատկերացումներն էլ արտացոլվում են առասպելներում և զրույցներում, որտեղ երկվորյակների ծնունդը կապվում է որևէ կենդանու հետ:

4. Բուսական ծագում

Քիչ չեն հիշատակումները նաև երկվորյակների՝ բույսերից ծնված լինելու կամ նրանց հետ սերտ կապ ունենալու

---

[1] Տե՛ս **Իսկանդարյան Ն.,** Վիպական Ծովինարի և համաշխարհային առասպելաբանության մեջ նրա զուգորդների ընդհանրության շուրջ, Բազմավէպ, հատոր ՃՀԲ, № 3-4, 2014:

[2] Տե՛ս **Штернберг Л. Я.** Первобытная религия, Л., 1936, էջ 80, կամ **West M. L.,** Indo-European Poetry and Myth, Oxford, 2007, էջ 190:

[3] Տե՛ս **Широкова Н.,** Мифы кельтских народов, 2004 http://loveread.ec/read_book.php?id=76125&p=1

մասին: «Կառուցվածքային մարդաբանություն» աշխատության մեջ հայտնի մարդաբան Լևի Ստրոսը նշում է, թե այն գաղափարը, որ բույսը մարդու նախատիպն է, կարող է դիտվել որպես այդ հասարակությունների արխաիկ դիցաբանական ընկալումների մասունք[1]: Բուլղարների առասպելական պատկերացումներում, օրինակ, երկվորյակներն ու մարդիկ ընդհանրապես ծնվում են դդումից[2]: Հարավամերիկյան ցեղերից մեկի առասպելներում խոսվում է կենաց ծառի մասին, որի արմատների մոտ կաթով լի կրծքեր են աճում, իսկ ծառի ճյուղերի վրա հանգստանում են դեռ չծնված երեխաների հոգիները: Իրանական (զրադաշտական) առասպելներում Մատրա և Մատրայնա զույգը առաջանում է խավարծիլ բույսից[3]: Ապոլլոնի և Արտեմիսի մայրը՝ Լետոն, երկվորյակների ծննդաբանության ժամանակ փաթաթվում էր արմավի, դափնու տերևներով[4]: Աֆրիկական որոշ ցեղերի պատկերացումներում երկվորյակները համարվում էին անտառի ոգիների զավակներ, և ընծայաբերման ժամանակ նրանց տանում էին անտառ: Մահանալուց հետո նրանց չէին թաղում, այլ թողնում էին անտառում՝ գազաններին կեր, այդպես կարծես թե վերադարձնում էին բնությանը այն, ինչ նրան էր պատկանում[5]: «Սասնա ծռեր» էպոսի պատումներից մեկում երկվորյակ եղբայրները իրենց «սենեկ»-տունը կառուցում են «մեշի՝» անտառի փեշին[6]: Էպոսի մի պատումում խոսք կա այն մասին, որ հրեղեն Թուր Կեծակին կախված է ծառի ճյուղից, և

---

[1] Տե՛ս **Леви-Строс К.,** Структурная антропология, էջ 353 (в прим.):

[2] Տե՛ս **Березкин Ю. Е., Дувакин Е. Н.,** Тематическая классификация и распределение фольклорно-мифологических мотивов по ареалам Аналитический каталог, https://www.ruthenia.ru/folklore/berezkin /e38b. html

[3] Տե՛ս Мифы народов мира. Энциклопедия: Электронное издание, М. 1980, с. 644, https://prussia.online/books/mifi-narodov-mira-1980-el

[4] Տե՛ս **Фрейзер Дж. Дж.,** նշվ. աշխ., էջ 90:

[5] Տե՛ս Мифы народов мира. Энциклопедия: Электронное издание, էջ 145:

[6] Տե՛ս Սասնա ծռեր, հ. Ա., էջ 943:

Սանասարն այն պատահաբար է գտնում[1]: Էլիադեի կարծիքով՝ երկվորյակների կենդանական և բուսական ծագման այս առասպելներում ընդգծվում է մարդ-բնություն մոգական համադաշնությունը[2]:

5.Երկվորյակների կապը անդրաշխարհի հետ

«Սյուժեի և ժանրի պոետիկան» մենագրության մեջ Օ. Ֆրեյդենբերգը, խոսելով երկնմանակության արքետիպի և դիցաբանության կապի մասին, արտահայտում է այն տեսակետը, թե երկնմանակի կերպարը, առաջանալով առասպելաբանական գիտակցության տարբեր շերտերում, խթանում է «հոգու՝ որպես մարդու կրկնակի գաղափարը»: Մարդկային մտածողության հիմքում ընկած է հայելային արտացոլման սկզբունքը՝ ռեֆլեքսիան: Դա պարզորոշ ներկայացված է, օրինակ, Սիերա Նևադայի ցեղերից մեկի հավատալիքում, որտեղ ընդգծվում է, որ բարին գոյություն ունի միայն այն պատճառով, որ չարն ակտիվ է, և եթե այն անհետանա, ապա բարու կարիքը էլ չի լինի[3]: Նման աշխարհընկալումը հիմք է դարձել դուալիստական այն գաղափարի համար, թե աշխարհի բոլոր առարկաները ունեն կրկնակ, և եթե դրանք տեսանելի չեն այս աշխարհում, ուրեմն նրանք կան ոգիների աշխարհում: Մարդը և նրա կրկնակը՝ ոգու տեսքով, գոյություն ունեին տարբեր աշխարհներում: Հատկանշական է, որ նմանակը հիմնականում թշնամի աշխարհի ներկայացուցիչ էր համարվում: Հավանաբար երկվորյակները մարդկանց կողմից ընկալվում էին որպես իրական աշխարհում մարդու և այնկողմնային աշխարհում նրա նմանակի մարմնացում:

Ֆրեյդենբերգը ընդգծում է նաև երկվորյակի կերպարի՝ անիմիստական ժամանակաշրջանում առաջացած լինելը և խոսելով հունական առասպելների հերոսների մասին՝ նշում

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 990:
[2] Տե՛ս **Элиаде М.,** նշվ. աշխ., էջ 165-166:
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 212:

է, թե գազանը կամ հրեշը, որի հետ հերոսը կռվում է, ընկալվում է որպես նրա կրկնակը: «Սասնա ծռերում» Սանասարի հակոտնյան Դեղձունին ամրոցում արգելափակած դևը կամ վիշապն է, Դավթի դեպքում դարձյալ վիշապներն են կամ դևերը, իսկ Մեծ Մհերի դեպքում դա միֆական առյուծն է, որի հետ ձեռնամարտը նա չզիջեց ոչ ոքի, ավելին, սպառնաց, թե կսպանի յուրաքանչյուրին, ով մոտ գա: Լինելով կերպարի ավելի վաղ պատմական մարմնավորում՝ գազանը փոխաբերաբար կարող է վերաբերվել անդրաշխարհին՝ դառնալով այս աշխարհում հերոսի կրկնակը: Այսինքն՝ գազան-կրկնակը նույն բնույթն ունի, ինչ նմանակ-հոգին[1]: Հարկ է նշել, որ նրանց՝ տարբեր տարածություններում գտնվելու գաղափարն արդեն իսկ մատնանշում է երկվորյակային ընդունված հակադրությունը:

Ինչպես նշեցինք, ողջերի ու մեռյալների աշխարհների սահմանագիծը առասպելական ընկալումներում հանդես է գալիս ջրի տեսքով: Գետը, լիճը, ընդհանրապես ջուրը՝ իբրև կյանքի ու մահվան, լույս ու մութ աշխարհների, անդրաշխարհի սահմանագիծ, հանրահայտ դիցաբանական մոդել է, որում ընդգծվում է երկու աշխարհների հակադրությունը[2]: Ջրի միջոցով անդրաշխարհ տեղափոխվելը տարածված մոտիվ է տարբեր ժողովուրդների առասպելներում և անգամ քրիստոնեական դավանանքում մկրտությունը իրացվում է անձին ջրի մեջ սուզելու ակտով՝որպես հին էության թաղում և նորի ձեռքբերում: Այս առումով Սանասարի՝ լճի մեջ մտնելու, իմա՛ անդրաշխարհ իջնելու, ապա ավելի կատարելագործված ու յոթ անգամ ավելի հզորացած դուրս գալու դրվագն ուղիղ վկայություն է այնկողմնային, անճանաչելի, գերբնական տարրերով լեցուն աշխարհի ու երկվորյակ եղբայրների կապի մասին: «Սանասար ճիժ էր, որ մտավ ծով, ե-

---

[1] Տե՛ս **Агранович С.З., Саморукова И.В.,** Двойничество, Самара, 2001:

[2] Տե՛ս **Фрейденберг О.,** Поэтика сюжета и жанра, М., 1997, էջ 210:

լավ, լցվավ, դարձավ հրեղեն», մինչդեռ թերի կամ ծուռ Բաղդասարը հրաժարվում է սահմանն անցնել ու սոսկումով սպասում էր ափին: Համանման մի օրինակ կա օսական էպոսում, երբ հերոսը՝ Բատրազը, նախ մտնում է իր հրամանով պատրաստված խարույկի մեջ ու թեժացած նետվում ծովը, կոփվում, ապա ավելի հզորացած դուրս գալիս մարտի[1]:

Բ) Երկվորյակ-անտագոնիստներ

Երկնմանակ հակառակորդներ հանդիպում են բանարվեստի պատմության ողջ ընթացքում՝ առասպելաբանական արխաիկ ժամանակներից մինչև մեր օրերը: Է. Թեյլորը, որը երկնմանակների առասպելի առաջին հետազոտողներից էր, անտագոնիստ երկվորյակների կերպարը կապում էր բարի և չար աստվածությունների մասին պատկերացումների հետ, որոնք զուգորդվում են պարզունակ նատուրալիստական գաղափարներով[2]: Իրական դիցաբանական պրակտիկայում Մելետինսկու մատնանշած դեմիուրգ-մշակութային հերոս-տրիքստեր առասպելական համակարգը կարող է իրացվել ինչպես երկբնույթ նախաստեղծ էակի մասին պատկերացումներում, այնպես էլ աշխարհի տարբեր ժողովուրդների ավանդություններում լայնորեն ներկայացված զույգերի՝ Դավթի ու Մսրա Մելիքի, Հուրոնների մոտ Յասքեհայի (Իոսեխ) և Տավիսկարոնի, իրանական Ահրիմանի ու Որմիզդի, հունական Պրոմեթևսի և Էպիմեթևսի, հրեական Հակոբի և Եսավի, հռոմեական Հոմուլոսի և Ռեմոսի առասպելներում: Սանասարն ու Բաղդասարը թեպետ միասեռ են ու գործում են միասնաբար, բայց նրանց մեջ ևս հակադրություն կա: Նրանք հակադիր են ուժով, որը պատճառաբանվում է նրանց ծագման տարբերությամբ, հզորությամբ՝ անդրաշխարհի սահմանն անցնելու համարձակությամբ, բնավորությամբ (Սանասարը խոհեմ է, զիջող, Բաղդասարը՝ ծուռ, դալի):

---

[1] Տե՛ս **Дюмезиль Ж.,** Осетинский эпос и мифология, М., 1976, էջ 64:
[2] Տե՛ս **Тайлор Э. Б.,** Первобытная культура, М., 1989, էջ 435:

Էպիկական երկվորյակության առավել արխաիկ տեսակը գրավոր էպոսում կարող ենք տեսնել «Գիլգամեշի» մեջ: Այստեղ երկնմանակների տարբերությունը ներկայացված է բնություն-մշակույթ հակադրության մեջ: Էնկիդուն վայրի արարած է, իսկ Գիլգամեշը՝ քաղաքակրթության կրողն է, որը փորձում է ինտեգրել Էնկիդուին իր աշխարհի մեջ՝ խաղալով մշակութային հերոսի դեր: Հոմուլոսի և Ռեմուսի պատմական ավանդույթի համաձայն՝ եղբայրը սպանում է իր եղբորը, քանի որ նա, ցատկելով ակոսի վրայով, ծաղրում է եղբորը: Երկվորյակների՝ լույս աշխարհ գալու կարգը ևս կարևոր գործոն էր. երկվորյակներից ավագը ավելի մեծ իրավունքներ ուներ, քան երկրորդը, ավելի ուժեղ էր, քան երկրորդը: Հակոբի և Եսավի աստվածաշնչյան լեգենդում եղբայրներն ի սկզբանե միմյանց ճիշտ հակառակ հատկանիշների կրողներն են: Առաջինը ծնված Եսավը մազոտ է, թափառական որսորդ: Հակոբը հեզ մարդ է, ով ապրում է վրանում:

Երկվորյակ-հակառակորդների արժեքային հակամարտությունը գենետիկորեն վերադառնում է «մշակութային հերոս-խաբեբա»-ի դիցաբանական կառուցվածքին: Դասական ձևով տրիքստերը՝ մշակութային հերոսի երկվորյակը, որը բացահայտորեն հակադրվում է նրան, ընկալվում է որպես հիմար, միամիտ կամ նենգ[1]: Նրանց բնույթը հակադիր է, և դրա պատվիրատուն հասարակությունն է ու արժեքների հասարակական տարբեր, երբեմն հակադիր ընկալումը: Մշակութային հերոսը ստեղծում է աշխարհը և հասկանում է նրա կառուցվածքը՝ տեղակայվելով և հիմնավորվելով աշխարհի կենտրոնում: Հակադիր հերոսը կամ տրիքստերը հանդես է գալիս որպես կենտրոնին հակակշիռ, որը գլխավորում է աշխարհաստեղծման կենտրոնախույս միտումները՝ առաջնորդելով «դավադրություն կենտրոնի դեմ»[2]: Նրանց հակադրութ-

---

[1] Տե՛ս **Мелетинский Е. М.**, նշվ. աշխ., էջ 41:

[2] **Шильман М.,** Трикстер, герой, его тень и ее заслуги https://core.ac.uk/download/pdf/84006515.pdf

յունը մատնանշվում է հենց սկզբից՝ արտաքին տեսքով, տնտեսական գործառույթներով, վարքագծով: Հակադիր երկվորյակներին միավորողը շատ դեպքերում մրցակցությունն է և առճակատումը (Աբել և Կայեն, Հռոմուլոս և Ռեմոս, Յասքեհա և Տավիսկարոն): Այդպիսի մրցակցության փայլուն օրինակ է մեր ազգային էպոսում կրտսեր Մսրամելիքի ու պատանի Դավթի առճակատումը, երբ Դավիթը սոսկ իր գոյությամբ Մելիքի համար արդեն մարտահրավեր է: Էպոսի գրեթե բոլոր պատումներում բազմիցս ընդգծվում է նրա դյուցազնական ուժի առավելությունը. «Մսրամելիք շատ ըռըկավ, ասաց.- Վերջին տիր եսա տ'ելնի, խետ ձի կռիվ անի»[1]: Հոր կողմից ազգակցական կապի կրողներից հատկապես երկրորդը՝ ապօրինածինն է ձեռք բերում նենգ խաբեբայի, երբեմն էլ դիվային բնույթի գծեր (ինչպես Մսրամելիքը, իրանական Ահրիմանը, շումերական Խումբաբան, իրոկեզների Տավիսկարոնը և այլն): Այն, որ Դավիթը օրինածին է ու հետևաբար արդար, մշակութային հերոսին բնորոշ բոլոր հատկանիշներով օժտված, վկայվում է էպոսում.

Ասաց.- Դա՛վիթ, Խաչ Պատարազին,
Կո սանդղի միջին:
Կ'երթաս հեռջեվ սանդղին
Քո չոքեր կը զարկես գետին,
Քո Ասված կը կանչես.
Թը տու լե քո խոր պես ա՛ռդար մարդ ես.
Կելնա, կը կա վար քո թեվին,
Կը կայնի Խաչ Պատարազին[2]:

Դավթի հակոտնյան վիշապ է կամ դև իր բնույթով[3]: Նա մենամարտից առաջ նկարագրվում է որպես առասպելական

[1] Սասնա ծռեր, հ. Ա., էջ 10:
[2] Նույն տեղում, էջ 20:
[3] «Մսրամելիքը, որ նույնպես լեռնանման անարդիլ հսկա է, ինչպես դևերը հեքիաթներում, օրերով քուն է մտնում»: **Աբեղյան Մ.,** հ. Ա, էջ 420:

հսկա, որը պետք է քնի յոթ/քառասուն օր, նրա ոտքերին շիկացած գութան են դիպցնում, բերանից գոլորշի է դուրս գալիս, փորձում է փչելով Դավթին ձիուց վար բերել և այլն: Այս գծերը տեսնում ենք նաև գերմանական Թորի ու Սկրիմիրի առճակատման **պատմության** մեջ: Նա Թորի հուժկու հարվածները չէր զգում, ծառի տակ քնած էր և այնպես էր խռմփացնում, որ ծառի ճյուղերը ճռճվում էին, ինչպես Մելիքի շնչից վրանն էր դողում[1]: Պատումներից մեկում և՛ Մսրամելիքը, և՛ Դավիթը պետք է յոթ օր քնեն մենամարտից առաջ: Չնայած այս քունը տարբեր որակի է (Դավիթը երազում նախաձեռնողական թռիչք է կատարում - մեծանում է չափերով և ուժ է հավաքում, իսկ Մսրամելիքը միայն ուժ է կուտակում): Մսրամելիքին, սահմանված յոթ օրվա փոխարեն, հաջողվում է ընդամենը երեք օր քնել. դա էլ նրա պարտության բանալին է, թեև նա պատկերված է որպես հսկա՝ Դավթի համեմատ[2]: Խաբեությունը, նենգությունը տրիքստերի հատկորոշիչ գործիքն է, իսկ հացկերույթի միջոցով հերոսին դավելը՝ տարածված մոտիվ: Մելիքի կողմից հնչեցված հաց կիսելու առաջարկը չմերժելով՝ դավադրության արդյունքում Դավիթը հայտնվում է հորի մեջ՝ պայմանական անդրաշխարհում: Գերմանացի դյուցազն Վիդգան ևս շղթայակապ հայտնվում է զնդանում, մենամարտից առաջ հացի է նստում Էդգայրի տանը[3], իսկ իռլանդական սագաներում Կուխուլինը պիտի մենամարտի հերոս Ֆերդինանդի հետ, որին մարտից առաջ արբեցնում են քաղցրանուշ գինով[4]: Հովանը, երբ տեսնում է Ջալալուն սարերում թափառելիս, կարծում է, թե Դավիթը մե-

---

[1] Տե՛ս **Աբեղյան Մ.,** հ. Ա, էջ 420, կամ Из саги о Тидреке Бернском; https://norse.ulver.com/src/forn/thidrek/ru2.html

[2] Տե՛ս **Абрамян Л. А.,** Герой без детства и герой, не расстаюшийся с детством, /Հայկական ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը: Միջազգային երկրորդ գիտաժողովի նյութերը, Եր., 2006, էջ 47-61:

[3] Տե՛ս **Աբեղյան Մ.,** հ. Ա, 420:

[4] Տե՛ս Ирландские саги, перевод А. Смирнова, М.- Л., 1933, էջ 136:

ռել է ու ձայն է տալիս նրան, այսինքն՝ Հովանի ձայնը զորավոր էր այնքան, որ կարող էր անգամ մեռյալների աշխարհ ներթափանցել.

Ձենով Հովան վախացավ. ասաց.
-Դավիթ սպանած ի, ձին փախի, եկի եստեխ:
Ձենով Հովան կանչեց-
Ձեն ընկավ սար ու ձոր-
Ասաց.-Դավի՛թ հո՞ւստն իս.
Հիշա Մարութա Բանձր Աստվածածին,
Խաչ Պատարազին, ինչ վար քո աջ թեվին[1]:

Գերբնական Խաչ Պատարազին է դառնում այն միջոցը, որը օգնում է Դավթին դուրս պրծնել անդրաշխարհից: Խոր փոսում, իմա՛ անդրաշխարհում հայտնված ևս մի հերոսի մասին է պատմում Ռիգվեդայում (I, 105) մի դրվագ: Տրիտա անունով մեկին իր ազահ եղբայրները նետում են ջրհորը: Ջրհորում մի գիշեր անցկացնելով՝ նա փրկության աղաչանքով դիմում է երկնքին ու երկրին, որ ներկայացված են որպես երկմիություն: Ջրհորի խորքից նա աղոթքով դիմում է աստվածներին, իսկ երբ կարողանում է մտովի կատարել սոմայի զոհաբերությունը, աստվածները փրկում են նրան: Խնդրում է Ագնիին (մարմնավորում է երկնային հուրը) ու Վարունային (մարմնավորում է ջրային տարերքը), որ ականջալուր լինեն: Վարունայի տված աղոթքի օգնությամբ նա կարողանում է դուրս գալ ջրհորից[2]: Ջրհորը, որի մեջ նստած է Տրիտան, այս համատեքստում կարելի է համարել որպես ստորին աշխարհի՝ անդրաշխարհի ինչ-որ համարժեք. այսպիսով նա դառնում է տիեզերական եռյակի հավասար անդամ՝ Երկինք — Երկիր — Ստորին աշխարհ[3]:

---

[1] Սասնա ծռեր, հ. Ա, էջ 28:
[2] Տե՛ս Ригведа I, 105 https://scriptures.ru/vedas/rigveda01_094_115.htm
[3] Տե՛ս **Топоров В.,** Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции. Պատմա-բանասիրական հանդես, 1977, №3, էջ 90:

Այսպիսով, աշխարհի դուալիստական ընկալումը մարդու դիցաբանական պատկերացումների անբաժանելի մասն է: Երկնմանակները աշխարհի այդպիսի մարմնավորման ամենապարզ և հարմար ձևն են, որը հիմնված է զույգ հակադրությունների հավասարաչափության վրա: Երկվորյակների արքետիպը՝ արտացոլված առասպելում, երկվորյակների նույնականության և բնությունից մշակույթ արարելու գաղափարի մոդելն է: Ընդհանուր առմամբ արխաիկ երկվորյակները դրական ենթատեքստ ունեին և երկրպագվում էին որպես սրբազան կերպարներ՝ կապված առատության և պտղաբերության հետ: Սրան զուգահեռ առաջանում են տարբեր, հակադիր բնույթ ունեցող երկվորյակների առասպելներ: Առասպելական երկվորյակների արքետիպը իր մեջ պարունակում է «կյանքի ստեղծագործության» անավարտության գաղափարը, իսկ երկվորյակ-անտագոնիստները «բաժանում» են արդեն ստեղծված, պատրաստի աշխարհը՝ կարծես վերադասավորելով այն իրենց շահերից ելնելով:

Գրականություն

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976
3. Գաբամաճեան Ս., Նոր բառգիրք հայէրեն լեզուի, Կ. Պոլիս, 1910
4. Դալալյան Տ., Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ, ՊԲՀ, 2002, էջ 195
5. ԺՀԼԲ, հատոր 1, Ե., 1969
6. Իսկանդարյան Ն., Վիպական Ծովինարի և համաշխարհային առասպելաբանության մեջ նրա զուգորդների ընդհանրության շուրջ, Բազմավէպ, հատոր ՃՀԲ, № 3-4, 2014
7. Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Երևան, 2017
8. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010
9. Ղռեջյան Լ., Երկվորյակների առասպելի ելակետային արժեքը հայ վիպական հուշարձանների հորինվածքում, Պատմաբանասիրական հանդես, № 2, 2010

10. «Սասնա ծռեր», խմբ. Մ. Աբեղյանի, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., հ. Ա, 1936
11. «Սասնա ծռեր», աշխ. Ս. Հարությունյանի, Ե., 1977
12. Սրուանձտեանց Գ., Գրոց ու Բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Միէրի դուռ, Կ.Պոլիս, 1874
13. Պետրոսյան Ա., Հայկական էպոսը և առասպելաբանությունը. ակունքներ. առասպել և պատմություն, http://vizantarm.am/page.php?369
14. Պետրոսյան Ա., Հայկական էպոսի հնագույն ակունքները, Ե., 1997
15. Абрамян Л. А., Герой без детства и герой, не расстаюшийся с детством / Հայկական ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը: Միջազգային երկրորդ գիտաժողովի նյութերը, Երևան, 2006
16. Абрамян Л., Парные образы “Сасна Црер”: близнецы, сводные братья, двойственные герои, Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, 2004
17. Абрамян Л., «Мифы о начале» и проблема первого табу / Անտառ Ծննդոց / Հոդվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին, Երևան, 2015
18. Агранович С. З., Саморукова И. В., Двойничество, Самара, 2001
19. Березкин Ю. Е., Дувакин Е. Н., Тематическая классификация и распределение фольклорно-мифологических мотивов по ареалам. Аналитический каталог https://www.ruthenia.ru/folklore/berezkin/e38b.html
20. Диоген Лаэртский, О жизни, учениях и изречениях знаменитых философов, М., 1986
21. Дюмезиль Ж., Осетинский эпос и мифология, М., 1976
22. Дюркгейм Э., Элементарные формы религиозной жизни, Мистика, Религия, Наука, Классики мирового религиоведения. Антология, М., 1988
23. Еврипид, Трагедии в 2 томах, т. 2, Финикиянки, Перевод И. Анненского, М., 1999
24. Зулумян Б., Архетип в структуре художественного сознания. Памятник армянской эпической поэзии “Песнь о Ваагне”, Պատմա-բանասիրական հանդես, № 2, 2007

25. Иванов В. В., Близнечные мифы, Мифы народов мира, т. 1, М., 1991
26. Леви-Строс К., Первобытное мышление, М., 1999
27. Леви-Строс К., Структурная антропология, М., 1985
28. Мелетинский Е.М. , О литературных архетипах, М., 1994
29. Мифологический словарь (под ред. Е. М. Мелетинский) М.,1991
30. Мифы народов мира. Энциклопедия: Электронное издание, М. 1980 https://prussia.online/books/mifi-narodov-mira-1980-el
31. Постовалова В. И. Картина мира в жизнедеятельности человека: Роль человеческого фактора в языке. Язык и картина мира, М., 1988
32. Псевдо-Аполлодор. Мифологическая библиотека (перевод В. Г. Боруховича, Л. 1972) https://ancientrome.ru/antlitr/t.htm?a=1358680001
33. Ригведа I, 105 https://scriptures.ru/vedas/rigveda01_094_115.htm
34. Саркисова-Куаме В., Культ Близнецов в Бауле, Африканский сборник (отв. ред.В Выдрин), СПб.,МАЭ РАН, 2009
35. Тайлор Э. Б., Первобытная культура, М., 1989
36. Топоров В., Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции. Պատմա-բանասիրական հանդես, № 3, 1977
37. Тэрнер В., Символ и ритуал, М., 1983
38. Широкова Н., Мифы кельтских народов, 2004 http://loveread.ec/read_book.php?id=76125&p=1
39. Шильман М., Трикстер, герой, его тень и ее заслуги https://core.ac.uk/download/pdf/84006515.pdf
40. Штернберг Л. Я., Первобытная религия, Л., 1936
41. Штернберг Л. Я., Культ близнецов в Китае и индийские влияния, сб. музея антропологии и этнографии, Л., 1927, т. VI
42. Элиаде М., Космос и история. Избранные работы. М., 1987
43. Фрейденберг О., Поэтика сюжета и жанра, М., 1997
44. Фрейзер Дж. Дж., Золотая ветвь, М., 2017
45. Scott Littleton C., Some possible Indo-European themes in the Iliad, Myth and Law among the Indo-Europeans, Berkley, 1970
46. West M. L., Indo-European Poetry and Myth , Oxford, 2007

■ НАИРА ИСКАНДАРЯН

ПАРАЛЛЕЛИ АРХЕТИПА БЛИЗНЕЦОВ В МИРОВОЙ МИФОЛОГИИ И В ЭПОСЕ «САСНА ЦРЕР»

Резюме

Архетипы – это прообразы психики и ее компонентов, которые наднациональны и специфичны для человеческого сознания в целом. В наиболее чистом виде они предстают в мифологии, поэтому они едины на начальном этапе культуры. В то же время следует отметить, что в каждой национальной культуре они приобретают неповторимое своеобразие, создавая национальные мифы и художественную картину мира.В статье мы попытаемся рассмотреть архетип однополых близнецов, какими являются мифологические персонажи Санасар и Багдасар, кровные братья, рожденные от одной матери, и и антагонисты герои- близнецы, Давид и Мсра Мелик, рожденные от одного отца.

Многие исследователи пытаются найти объяснение происхождения архетипа близнецовов не на основе древних богословских представлений, а на основе существующих в обществе представлений о близнецах и факте их рождения. Некоторые из них считают, что рождение женщиной близнецов в древности рассматривалось как свидетельство плодородия и напрямую связывалось с культом плодородия. Мифы о близнецах моделируют рождение человеческого коллектива и появление общественной жизни из досоциальной жизни. Братья едины в своих целях, действуют организованно: основывают города, помогают людям, лечат, залечивают раны, опекают.Такими мифологическими героями-близнецами являются рожденные от одной матери Санасар и Багдасар из эпоса «Сасна Церер», балтийский Юмис, само имя которого означает двойной колос, Ромул и Рем, древнеиндийские Ашвины, а также Амфион и Зет, рожденная Зевсом пара близнецов, легендарные основатели Фив.

Ключевые слова: *эпос, архетип, мифология, параллели, культурный герой, однополые близнецы, антагонистические близнецы*

■ NAIRA ISKANDARYAN

PARALLELS OF THE IDENTICAL TWIN ARCHETYPE IN WORLD MYTHOLOGY AND "THE SASNA TSRER"

Summary

Archetypes are primitive models of the psyche and its components, which are transcendental and specific to human consciousness in general. They appear in their purest form in mythology, which is why they are united for the initial stage of culture. At the same time, it should be noted that in each national culture, they acquire unique originality while creating national myths and the artistic image of the world. In the article, we will try to examine the archetype of same-sex twins, that is, in the mythical characters of Sanasar and Baghdasar, blood brothers born from the same mother, and antagonistic twins, in this case, in the context of the characters of David and Msra Melik, born from the same father, but opposite heroes.

Many researchers try to find an explanation for the origin of the twin archetype, not based on ancient theological ideas, but based on existing ideas in society concerning twins and the fact of their actual birth. Some of them believe that the birth of twins by a woman in ancient times was perceived as a sign of fertility and was simply associated with the cult of fertility. Twin myths model the birth of the human collective and the emergence of public life from pre-social life. The brothers are united in their goals, they act organized, they found cities, they help people, they cure, they heal wounds, and they sponsor. Such mythical twins are Sanassar and Baghdasar born of the same mother in the epic "Sasna Tsrer", the Baltic Eumis, whose very name means paired spike, Romulus and Remus, the ancient Indian Ashwins, Amphion and Zetus, the twin pair born of Zeus, represented as the legendary founders of Thebes.

Key words: *epic, archetype, mythology, parallels, cultural hero, same-sex twins, antagonistic twins*

■ **Նաիրա Իսկանդարյան** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի և Գավառի պետական համալսարանի դասախոս: Հետաքրքրությունների հիմնական առարկան էպոսագիտությունն է և համեմատական առասպելաբանությունը: Հեղինակ և համահեղինակ է մի շարք հոդվածների, որոնք վերաբերում են հայ և համաշխարհային առասպելաբանության զուգորդումներին: Հեղինակի հետաքրքրությունների ծիրում է նաև կանանց ազատության թեման հայ գրականության մեջ:

Наира Искандарян - Российско-Армянский университет, ГГУ, к.ф.н., доцент – основной предмет интереса – эпосоведение и сравнительная мифология. Этот интерес включает также область сравнительного изучения армянского эпоса и европейских эпосов. Является автором и соавтором ряда статей, посвященных сравнительному анализу армянской и мировой мифологии. Тема женской свободы в армянской литературе также является одним из интересов автора.

Naira Iskandaryan - Russian-Armenian University, GSU, PhD, Associate Professor - The main subject of interest is epic studies and comparative mythology. This interest also includes the field of comparative examination of the Armenian epic and European epics. She is the author and co-author of a number of articles devoted to the comparative analysis of Armenian and world mythology. The theme of women's freedom in Armenian literature is also one of the author's interests.
isnaira123456@gmail.com